

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվականի, ՀՕ-193) 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների» աղյուսակի 18-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ կետով՝

«11	սեյսմաշրջանացման (սեյսմիկ շրջանացում, մանրամասն սեյսմիկ շրջանացում, միկրոսեյսմաշրջանացում) աշխատանքներ	Կ Մ	Բ	-	-	-	-	Հ	-»
-----	--	-----	---	---	---	---	---	---	----

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմաշրջանացման աշխատանքները ենթակա են լիցենզավորման: Սակայն, սեյսմաշրջանացման աշխատանքները՝ որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ չեն ընդգրկվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետում («Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2002թ. հունիսի 12-ին, իսկ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ 2001թ. մայիսի 30-ին):

Վերոհիշյալ օրենքները իրար համապատասխանեցնելու նպատակով ներկայացվում է սույն նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

Սույն օրենքի նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի եւ եկամուտների մասով փոփոխություններ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

Սույն օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեում ծախսերի մասով փոփոխություններ չի նախատեսում, իսկ եկամուտների մասով նախատեսում է փոփոխություններ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ-ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

**«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում
սեյսմաշրջանացում, մանրամասն սեյսմիկ շրջանանացում, միկրոսեյսմաշրջանացում
եզրերի վերաբերյալ**

«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում է, որ սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիցենզավորման ենթակա են սեյսմաշրջանացման աշխատանքները: Սեյսմաշրջանացումը, կախված քարտեզագրման մասշտաբից (փոքր՝ 1:1000-1:10000, միջին՝ 1:100000, մեծ՝ 1:500000) և աշխատանքների կատարման տարածքի ընդգրկումից (ՀՀ ամբողջ տարածքը, ՀՀ տարածքի մի մասը, առանձին բնակավայր կամ օբյեկտ) լինում է ընդհանուր սեյսմիկ շրջանացում կամ պարզապես սեյսմաշրջանացում, մանրամասն սեյսմիկ շրջանացում և սեյսմիկ միկրոշրջանացում (սեյսմամիկրոշրջանացում): Օրենքում նշված սեյսմաշրջանացումը, որպես ընդհանրական եզր, ենթադրում է ընդհանրապես սեյսմաշրջանացման աշխատանքներ՝ անկախ տարածքի ընդգրկումից և, հետևաբար, մասշտաբից: Վերոհիշյալ աշխատանքներով կատարվում է երկարաժամկետ սեյսմիկ վտանգի գնահատում, որի արդյունքում կազմվում և լիազոր մարմնի կողմից հաստատվում են են տարբեր մասշտաբների նորմատիվային փաստաթղթեր՝ սեյսմաշրջանացման քարտեզներ. սեյսմիկ շրջանացման քարտեզները հիմք են հանդիսանում ՀՀ սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի համար, մանրամասն սեյսմիկ շրջանացման քարտեզները հիմք են հանդիսանում հողօգտագործման և բնակչության տարաբնակեցման սխեմաների մշակման համար, իսկ սեյսմամիկրոշրջանացման քարտեզները պարտադիր հաշվի են առնվում բնակավայրերի կառուցապատման, ինչպես նաև հատուկ, կարևոր և ընդհանուր նշանակության օբյեկտների (13 մարտի 2003թ. ՀՀ կառավարության N237-Ն որոշում) նախագծման համար:

Նախագծի մշակման հեղինակները

Նախագիծը մշակել են. «ՍՊԱԾ» գործակալության պետ Ա.Անտոնյանը, «ՍՊԱԾ» գործակալության պետի տեղակալ Հ.Պետրոսյանը, «ՍՊԱԾ» գործակալության բաժնի պետ Ռ.Բաղդասարյանը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ պետական կառավարման շահագրգիռ մարմինների առարկությունների և առաջարկությունների քննարկման արդյունքների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը (առարկության, առաջարկության ստացման ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը
<p>ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն 17.07.2007թ. 12/43-7627 գրություն</p>	<p>1. Առաջարկվում է փոփոխություն կատարել «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքում՝ հանելով լիցենզավորման վերաբերյալ դրույթները: 2. Առաջարկվում է նաև լրացում կատարել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում:</p>	<p>1. Չի ընդունվել, քանի որ բնագավառը սերտորեն կապված է մարդու կյանքի և անվտանգության ապահովման հետ: 2. Ընդունվել է:</p>
<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն 29.06.2007թ. ՔՆ-15/2261 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի</p>	
<p>«ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա» ՊՈԱԿ 19.07.2007թ. 24-01/340 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի</p>	
<p>ՀՀ Երևանի պետական համալսարան 04.07.2007թ. 01/364 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի</p>	
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 11.09.2007թ. թիվ Ե-4793</p>	<p>1. Առաջարկվում է նախագծի 1-9 հոդվածում «Սեյսմամիկրոշրջանացման» բառը հանել, քանի որ «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սեյսմիկ պաշտպանության բնագավառում լիցենզավորման ենթակա են</p>	<p>1. Չի ընդունվել: Նախագիծը լրացվել է նոր հիմնավորում-պարզաբանումով, իսկ նախագիծը խմբագրվել և ավելացվել է բաց թողնված “մանրամասն սեյսմիկ շրջանացում” եզրը:</p>

	<p>սեյսմաշրջանացման աշխատանքները:</p> <p>2. Առաջարկվում է նախագծի 1-9 հոդվածի «տեսակը» սյունակի» բառերը անհրաժեշտ է փոխարինել «տեսակների» աղյուսակի» բառերով, նկատի ունենալով «լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները</p> <p>3. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի «կետը» բառը փոխարինել «բաժին» բառով: Նույն հոդվածի վերաբերյալ հայտնվում է, որ «ենթակետով» բառը անհրաժեշտ է փոխարինել «կետով» բառով:</p> <p>4. Գտնում ենք, որ նախագիծը չի բխում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ-ի օգոստոսի 8-ի «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին» թիվ 994-Ն որոշման 215-րդ կետի պահանջներին համապատասխան պետք է կրճատվեն լիցենզավորվող գործունեության տեսակները, պետք է պարզեցվեն լիցենզավորման գործառույթները, ինչպես նաև պետք է ներդրվեն պետական գրանցման և լիցենզավորման էլեկտրոնային համակարգերը և մասնագիտական որակավորման որոշակի գործառույթները պետք է փոխանցվեն համապատասխան գործարար միավորումներին:</p>	<p>2. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրամշակում:</p> <p>3. Ընդունվել է: Կատարվել է համապատասխան լրամշակում:</p> <p>4. Չի ընդունվել է, քանի որ բնագավառը սերտորեն կապված է մարդու կյանքի և առողջության պահպանման հետ և «լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանվում է լիցենզավորման նպատակը, այն է՝ անձանց կյանքին, առողջությանը, գույքային, պետության և հասարակության շահերի պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողության իրականացումը: Սեյսմաշրջանացման աշխատանքների իրականացման արդյունքում կազմվում և լիազոր մարմնի կողմից հաստատվում են նորմատիվ փաստաթղթեր՝ տարբեր մասշտաբի սեյսմաշրջանացման (մեծ մասշտաբի սեյսմիկ շրջանացման,</p>
--	--	---

	<p>5. Ինչպես նաև հայտնում են, որ «Սեյսմիկ պաշտպանության մասին» հայտանի Հանրապետության օրենքը ընդունվել է 2002թ-ի հունիսի 12-ին, որի 10-րդ հոդվածը սահմանում է, որ սեյսմաշրջանացման աշխատանքները ենթակա են լիցենզավորման, սակայն մինչև օրս հիշյալ բնագավառում լիցենզավորման հետ կապված որևէ հիմնախնդիր չի առաջացել և պարզ չէ թե ինչով է պայմանավորված հիշյալ գործունեության տեսակը լիցենզավորելը: Այդ առումով հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագծի ընդունումը լուրջ հիմնավորման կարիք ունի:</p> <p>Միաժամանակ նկատի ունենալով վերոհրչյալը՝ գտնում են, որ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայտանի Հանրապետության օրենքում, մասնավորապես ուժը կորցրած ճանաչել հիշյալ օրենքի 10-րդ հոդվածը:</p>	<p>մանրամասն սեյսմիկ շրջանացման և սեյսմամիկոշրջանացման) քարտեզներ և Օրենքով նախատեսված դրույթի կատարման նախագծի մերժումը նպատակահարմար չէ բխեցնել ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի թիվ 994-Ն որոշման 215 կետի պահանջներից:</p> <p>5. Չի ընդունվել, որովհետև՝</p> <p>ա. 2002թվականին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ՀՀ տարածքում մեծ մասշտաբի սեյսմիկ շրջանացման աշխատանքներ չեն կատարվել. վերջին աշխատանքը կատարվել է 1998թ. ՀՀ ՍՊԱԾ-ի կողմից:</p> <p>բ. Կողմնակի աղբյուրներից հավաստի տեղեկատվություն կա, որ մանրամասն սեյսմիկ շրջանացման, սեյսմամիկոշրջանացման առանձին աշխատանքներ այդպես էլ չեն ներկայացվել Լիազոր մարմին՝ հաստատման (Երևանի Կենտրոն, Աջափնյակ համայնքների մանրամասն սեյսմիկ շրջանացման քարտեզները, կառավարության որոշմամբ հաստատված համայնքների գոտևորման, հողերի օգտագործման սխեմաների համար անհրաժեշտ սեյսմամիկոշրջանացման քարտեզներ, հատուկ նշանակության օբյեկտների և միջկառավարական պայմանագրերով կատարվող քաղաքաշինական օբյեկտների սեյսմամիկոշրջանացման քարտեզներ):</p>
--	--	--

		<p>Այդ աշխատանքները կատարվում են ենթակապալառուների կողմից, իսկ պատվիրատուները շրջանցում են «Սեյսմիկ պաշտպանության մասն» ՀՀ օրենք 8-րդ հոդվածի ե) կետի պահանջը: Այս շրջանցումը հիմնախնդիրների առկայության վկայություն է:</p> <p>գ. Մեր կողմից ներկայացվող լիցենզավորման կարգի նախագծով փորձել ենք կարգավորել որոշ հիմնախնդիրներ, կապված մասնագիտական որակավորման և սարք-սարքավորումներով հագեցվածության հետ: Որոշ հիմնախնդիրներ ոչ լիարժեք լուծվել են աշխատանքային կարգով: Մեկ այլ հիմնախնդրի օրինակ. Երևան քաղաքի սեյսմամիկրոշրջանացման քարտեզի հաստատման ժամանակ ծագած վեճը, կապված աշխատանքի ծավալի և որակի հետ, լուծվել է դատական կարգով:</p> <p>Հիմնախնդիրների լուծման քայլերից են եղել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ՍՊԱԾ գործակալության կողմից ներկայացված և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Սեյսմամիկրոշրջանացման քարտեզի հաստատման կարգը հաստատելու մասին» և ՀՀ տարածքային կառավարման նախարարի և ՀՀ քաղաքաշինության նախարարի համատեղ հրամանով հաստատված</p>
--	--	---

		<p>«Սեյսմամիկրոշրջանացման աշխատանքների իրականացման կարգը հաստատելու մասին» փաստաթղթերի ընդունումը: Նկատի ունենալով, որ սեյսմաշրջանացման քարտեզները նորմատիվ փաստաթղթեր են, ոլորտի կարգավորման համար հաջորդ քայլը սեյսմաշրջանացման (սեյսմիկ շրջանացում, մանրամասն սեյսմիկ շրջանացում, միկրոսեյսմաշրջանացում) աշխատանքների լիցենզավորումն է, լիցենզավորման կարգի հաստատումը:</p>
--	--	--